


2018թ-ի ՕՊԵՐԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ




Հաշվետու ժամանակահատվածում ԱԿԲ-ն լիարժեքորեն և ամբողջ ծավալով կատարել է իրեն վերապահված գործառնության պարտականությունները հանցավորության դեմ պայքարի ոլորտում: ԱԿԲ-ի հիմնական խնդիրները հանդիսացել են՝ ոստիկանական ծառայություններին, ազգային իրավապահ այլ մարմիններին և Ինտերպոլի անդամ երկրների ԱԿԲ-ներին առավելագույնս ապահովել Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության տրամադրության տակ առկա տեղեկատվությամբ (օպերատիվ և մեթոդական), արագ և արդյունավետ կապ հաստատել Ինտերպոլի անդամ երկրների ոստիկանական մարմինների հետ՝ եղած օպերատիվ տեղեկատվությունն իրացնելու նպատակով:

ԱԿԲ-ի կողմից 2018թ. ընթացքում ստացվել և առաքվել է 18635 (2017թ.՝ 17405) տեղեկատվական միավոր, որից 6760-ը (2017թ.՝ 6632)՝ փոխանակվել է ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների հետ:




ԱԿԲ-ի գործունեության ուղղություններից առաջնահերթային են հանդիսացել՝ անձանց հետախուզումը, անձանց օպերատիվ ստուգումները և նույնացումը 12530 (2017թ.՝ 11499) տեղեկատվական միավոր, առևանգված տրանսպորտային միջոցների հետախուզումը 822 (2017թ.՝ 778), դրամանենգությունը և փաստաթղթերի կեղծումը 1000 (2017թ.՝ 1312) և այլն:




Գլխավոր քարտուղարություն է ուղարկվել օպերատիվ նշանակության 24 (2017թ.՝ 33) հատուկ հաղորդագրություններ:

ԱԿԲ-ն համագործակցել է Ինտերպոլի անդամ 89 երկրների հետ, որոնցից առավել ակտիվ կապ է եղել՝ Ռուսաստանի Դաշնության՝ 1651 ստացված և առաքված տեղեկատվական միավոր, Իրանի՝


633, Ուկրաինա՝ 535, Ֆրանսիայի՝ 515, Վրաստան՝ 510, Գերմանիայի՝ 505, Թուրքիայի՝ 392, ԱՄՆ՝ 349, Շվեդիայի՝ 229 և Լեհաստան՝ 197 հետ:



Ինտերպոլի անդամ երկրներից հետախուզման վերաբերյալ ստացված 199 (2017թ.՝ 170) նոր հարցումների հիման վրա, կատարված աշխատանքների արդյունքում ոստիկանության մարմինների միջոցով հաջողվել է կազմակերպել 69-ի (2017թ.՝ 67) հայտնաբերումը Հայաստանի




Հանրապետությունում, որոնցից 26-ը (2017թ.՝ 33) ձերբակալվել են, 5-ը (2017թ.՝ 4) ենթարկվել էքստրադիցիայի: Իրականացված աշխատանքների շնորհիվ դրանց թվում հաջողվել է հայտնաբերել միջազգային հետախուզման մեջ գտնվող 33 անձանց, որոնցից 21-ը ձերբակալվել են, 5-ը ենթարկվել էքստրադիցիայի:




Հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ ՀՀ ոստիկանության մարմինների կողմից ստացված 232 (2017թ.՝ 201) նոր հարցումների հիման վրա տեղեկատվության օպերատիվ ուղեկցումը կազմակերպելու շնորհիվ հաջողվել է պարզել նրանցից 182-ի (2017թ.՝ 173) գտնվելու վայրը, որոնցից 146-ը (2017թ.՝ 117) ձերբակալվել են, իսկ 21-ը (2017թ.՝ 18) ենթարկվել էքստրադիցիայի: Ինտերպոլի ուղիներով իրականացված աշխատանքների շնորհիվ հաջողվել է հայտնաբերել միջազգային հետախուզման մեջ գտնվող 53 անձանց, որոնցից 42-ը ձերբակալվել են, 17-ը ենթարկվել էքստրադիցիայի:

Ինտերպոլի հետախուզվողների ինտերնետային վեբ էջում արտացոլված են 10 հետախուզվողների տվյալները:

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի մաքսային ձևակերպումների մասնագիտացված կետից և Ճանապարհային ոստիկանությունից ստացված տեղեկատվության հիման վրա ստուգվել է 57983 (2017թ.՝ 43665, ինչպես նաև Ճանապարհային ոստիկանությունից ստացված հարցումներ ԵՏՄ-ից ներմուծված 23465 ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ, մինչդեռ հաշվետու ժամանակահատվածում նմանատիպ հարցումներ չեն ստացվել) ավտոտրանսպորտային միջոց: Արդյունքում Հայաստանում հայտնաբերվել է հափշտակված 11 (2017թ.՝ 7) ավտոմեքենա: Միջազգային հետախուզման մեջ են գտնվում Հայաստանի տարածքում հափշտակված 163 (2017թ.՝ 165) ավտոմեքենաներ:



Ինտերպոլի SLTD (կորած գողացված ճամփորդական փաստաթղթեր՝ անձնագրեր, ID քարտեր, վիզաներ և այլն) պահոցում մեր կողմից հաշվառման դրված փաստաթղթերի համընկնումների կապակցությամբ հարցումներ են ստացվել կորած/գողացված 27 անձնագրերի վերաբերյալ (2017թ.՝ 30), որոնցից այլ անվան տակ օգտագործվել են 6-ը (2017թ.՝ 13):



Շարունակվում է ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի տվյալների պահոցների համալրումը: Այսօրվա դրությամբ ընդամենը ԱԿԲ-ի տվյալների պահոցներում կուտակված է 321327 տեղեկատվական միավոր:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և ոստիկանության ծառայություններին ու այլ շահագրգիռ մարմիններին են տրամադրվել 71 (2017թ.՝ 74) վերլուծական և տեղեկատվական նյութեր հանցավորության դեմ պայքարի տարբեր ուղղությունների վերաբերյալ, որոնք մեթոդական և կիրառական նշանակություն ունեն: ՀՀ ոստիկանության ծառայություններ (ԿՀԴՊԳՎ, ՔՀԳՎ, ԻԿ, ՓԶՎ և այլ իրավապահ մարմիններ) փոխանցվել են օպերատիվ բնույթի 14 նյութեր (2017թ.՝ 15): Կազմակերպվել է ՀՀ ոստիկանության քննչական և ԿՀԴՊ գլխավոր վարչություններից, ինչպես նաև Բելգիայի, Ֆրանսիայի և Ուկրաինայի ԱԿԲ-ներից ներկայացված՝ 25 (2017թ.՝ 30)՝ միջազգային քննչական հանձնարարականների կատարումը: